ԱԶԳ

# ՇՐՋԱՆ ԱՌԱՋ

Նախիջեւանի Հանրապետության Օրդուբադի շրջանի Քիլիթի գյուղի իրադրության հետ կապված վերջին իրադարձությունները վկայում են ոչ միայն այն մասին, որ հանրապետության ղեկավարությունը ջանում է [illegible] Ադրբեջանի նախկին նախագահի [illegible] կլանից, այլեւ այն մասին, որ «զրդանի ընդդիմության» մեջ ակտիվ է Ադրբեջանի Ժողճակատի հետ Մուսավաթ կուսակցության բլոկի ստեղծումը:

Նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի խոսքերով, հանրապետության իշխանությունների [illegible]

[illegible] ստել են առանձին անձինք, որոնք նախկինում ԱԺՃ-ի եւ առհասարակ ազգային ազատագրական շարժման հետ որեւէ առնչություն չեն ունեցել: Դրա հետեւանքով Ադրբեջանում օրենքների անտեսումը դարձել է օրվա նորմ: Օրենքները մեկնաբանվում են իշխանությունների, եւ առաջին հերթին, նրանց նախագահի կողմից:

Ավելի ճիշտ, ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ Մուսավաթ կուսակցության եւ դրա ղեկավար [illegible]

[illegible]

# ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# «Մուսավաթ + Ադրբեջանի Ժողճակատ» քաղաքական դաշինք

[illegible]

---

ԹԵԺ ԳԾՏ

## Վրաց-աբխազական հակամարտության գոտում իրադրությունը սրվել է

ԹԲԻԼԻՍԻ, 9 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ-ԻՍԱ ՊՐԵՍ: Ռուսական խաղաղարար ուժերի հրամանատար գեներալ լեյտենանտ Վասիլի Յակուշեւի խոսքերով, մարտի 1-ից հետո վրաց-աբխազական սահմանում, անվտանգության գոտում իրավիճակը բարդացել է. հաճախակի են դարձել ելուզակային եւ դիվերսիոն հարձակումները: Յակուշեւը նշեց, որ «կապույտ սաղավարտները» տեղեկություններ ունեն ահաբեկիչների ինքնության եւ գտնվելու վայրի մասին:

Վրաստանի պաշտպանության նախարար Վարդիկո Նադիբաիձեն հանրապետության քաղաքական շրջանակներին կոչ արեց դադարեցնել վրաց-աբխազական հակամարտության գոտուց հաշտարար ուժերի դուրս բերման անհրաժեշտության վերաբերող խոսակցությունները, քանզի առանց դրանց մասնակցության դժվար է դիմակայության կարգավորման հույս ունենալ: Մարտի 7-ին Սենակիում Նադիբաիձեն դռնփակ հանդիպում է ունեցել վարչապետ Օթար Պացացիայի եւ Արեւմտյան Վրաստանում պետության ղեկավարի լիազոր Կիվի Լոմինաձեի, ինչպես նաեւ ռուսական «կապույտ սաղավարտների» հրամանատար գեներալ լեյտենանտ Վասիլի Յակուշեւի հետ:

ՄՈՍԿՎԱ

## Կրկին լուրեր են պտտվում Պետդումայի ցրման վերաբերյալ

ՄՈՍԿՎԱ, 9 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ-ԻՍԱ ՊՐԵՍ: Ինչպես հայտնի դարձավ ԻՍԱ պրեսին, Պետդումայի կողմնակիցներում կրկին լուրեր են պտտվում Դումայի առաջիկա ցրման մասին: Նշվում է կոնկրետ օր՝ մարտի 17-ը: Հավանաբար, դա կապված է այն բանի հետ, որ շուտով պատգամավորները պետք է առաջադրեն երեք ուժային նախարարների վստահության հայտնելու հարցը: Խորհրդարանականները վերջին անգամ ցրում էին սպասում մարտի 2-ին: Որոշ պատգամավորների կարծիքով առավել ինչ բարեհաջող ավարտվեց այն պաշտոնով, որ նախօրեին զոհվեց հեռուստալրագրող Վլադիսլավ Լիստեւը եւ ամենը մոռացան Դումայի մասին:

## Եվրամիությանն անդամակցելն Ուկրաինային կարժենա 3 մլն դոլլար

Լվովի «Մոլոդա Գալիչինա» թերթը, վկայակոչելով Ուկրաինայի արտգործնախարար Գենադի Ուդովենկոյին, գրում է, որ եվրոպական միությանը Ուկրաինայի անդամակցումը հանրապետության վրա կնստի 3 մլն դոլլար: Միաժամանակ, ըստ թերթի, Ուդովենկոն հերքել է լուրերն այն մասին, թե Կիեւը իբր արագացված է եվրամիություն ընդգրկվելու մեջ:

ԻՍԱ ՊՐԵՍ-ՍՆԱՐՔ

ԹԲԻԼԻՍԻ

## Իոսելիանու դեմ մահափորձ կատարողները դատապարտվեցին մահապատժի

Վրաստանի Գերագույն դատարանը մահապատժի վճիռ է կայացրել Զվիադ Գամսախուրդիայի երկու կողմնակիցների՝ 34-ամյա Զոխվաձեի եւ 33-ամյա Գելբախիանիի նկատմամբ, որոնք մեղադրվում էին 1992 թ. հունիսի 13-ին Ջաբա Իոսելիանու դեմ ահաբեկչական գործողություն կատարելու համար: Հիշեցնենք, որ ականապատված ավտոմեքենայի պայթյունի հետեւանքով այդ օրը Թբիլիսիի փողոցներից մեկում զոհվեցին 5 պատահական անցորդներ, այդ թվում մի հինգ տարեկան երեխա: Մեղադրյալներին է ներկայացվել մեղադրանքների մի ամբողջ փաթեթ՝ սկսած ապօրինի զենք պահելուց մինչեւ կանխամտածված սպանությունը: Մարտի 7-ին այս գործի հետաքննությունը վերահսկող խորհրդարանական հանձնաժողովը հանդես է եկել հայտարարությամբ, որի մեջ մասնավորապես նշել է դատավարության ընթացքում թույլ տրված բազմաթիվ կոպիտ խախտումներ:

ԻՍԱ ՊՐԵՍ-ՍՆԱՐՔ


«ԱՐԱՐԱՏ» ավիաձեռնարկությունը

(«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերության պետական դուստր ձեռնարկություն)

ЯК - 40 ինքնաթիռով կատարում է կանոնավոր չվերթեր Երեւանից («Էրեբունի» օդանավակայանից) Սոչի, Ստավրոպոլ, Վոլգոգրադ, Անապա, Մախաչկալա, Վլադիկավկազ, Բաքում, Նալչիկ:




«ԱՐԱՐԱՏ» ավիաընկերության МИ-8 ուղղաթիռներով Դուք կարող եք իրականացնել

ուղեւորների եւ ուղեբեռների փոխադրում
բեռների եւ փոստի փոխադրում
բժշկական օգնություն
բարձր լարվածության հաղորդալարերի, կապի գծերի, գազատարի, նավթամուղի, գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում
Հայաստանի սահմաններում էքսկուրսիոն թռիչքներ
գետերի, ջրանցքների, ավտոմայրուղիների հետազոտում եւ պարեկություն
արշավների, երկրաբանական աշխատանքների սպասարկում

Ավիաձեռնարկության թռիչքային անձնակազմը ունի Լեռնային Ղարաբաղում ծայրահեղ իրավիճակներում աշխատելու բազմամյա փորձ, իսկ ավիասպասարկման ջոկը զգալիորեն ցածր են շուկայականից

Երեւան, Արշակունյաց պ.135, օդանավակայան «Էրեբունի»
Հեռ՝ 486-941, 484-761 Ֆաքս՝ 448-987


digitised by A.R.A.R.@

# Ռ. Պետրոսյան. «ՀՌԱԿ-ը կառուցողական գործունեություն է իրականացնում ԳԽ-ում»

**— Պրն Պետրոսյան, ինչո՞ւ է ընթանում ընտրությունների մասին օրենքի քննարկումը խորհրդարանում:**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

ՍՓՅՈՒՌՔ

## Հայոց Պատրիարքը դժգոհում է կաթողիկոսական ընտրություններին աշխարհականների մասնակցությունն արգելող որոշումից

«Վերջին տասը տարիների ընթացքում ծավալված ազգայնամոլական պայքարը փչացրեց Թուրքիան: Եւ որոշեց բռնահալածել պատրիարք, ըստ եմ մտադրված Թուրքիայի ներկա վիճակով», — բառերով «Հյուրրիյեթ» թերթին տված հարցազրույցում հայտարարել է Թուրքիո Հայոց Պատրիարք Գարեգին Գազանճյանը, ամփոփելով 1950-ական թվականներից հետո Թուրքիայում տեղի ունեցած հեղափոխությունների ներգործությամբ հայերի վայրի մասին զրույցը:

Ըստ թերթի, Գարեգին Պատրիարքին մտահոգում է նաև կաթողիկոսական ընտրությունը Թուրքիայից աշխարհիկ պատգամավորների մասնակցության արգելման հարցը: Պատրիարքը գտնում է, որ ինչպես աշխարհի բոլոր երկրներից, այնպես էլ Թուրքիայից Էջմիածին պետք է մեկնի 3 կղերական և 5 աշխարհական: «Սակայն կառավարությունը մերժել է աշխարհականների մեկնումը, պատճառաբանելով, որ այդ պատգամավորների մասնակցությունը ներհակ է Լոզանի դաշնագրին», ասում է նա:

Ս. Փրկիչ Հիվանդանոցի Հոգաբարձուների ատենապետ Փիլո Արաս եւս, ինչպես բազմաթիվ այլ հայեր, չի թաքցնում իր դժգոհությունները:

«Մինչ ողջ աշխարհի հայերը ընտրության պետք է մասնակցեն, մեզանից ոչ ոք չի մասնակցում: Դա առաջին հերթին բացասաբար է ընդունում Թուրքիային: Իսկ ըստ Լոզանի դաշնագրի որ հոդվածն է խախտվում մեզ համար հանելուկ է», ասել է Արաս: Թերթի մյուս զրուցակիցները նույնպես բացառել են հիշյալ դաշնագրում նման արգելող կետի առկայությունը: ՆՏ

ՀԱՄԱՌՈՏ

## Պուլկովոն կդառնա Եվրոպայի խոշորագույն օդանավակայանը

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ՄԱՐՏ, ԻՆՏԵՐՖԱՔՍ: 50 միլիոն ուղեւոր թողունակությամբ Պուլկովոյի օդանավակայանի առաջին հերթը շահագործման կհանձնվի 1998 թ.: Շինարարությունը նախատեսվում է լրիվ ավարտել մինչեւ 2002 թ.: Այն իրականացնում է մի բաժնետիրական ընկերություն խորհրդատվությամբ, օդանավակայանի եւ ամերիկյան ընկերություններից մեկի մասնակցությամբ: Ըստ նախնական հաշվարկների, նախագծի առաջին հերթը կարժենա 300 մլն դոլլար, երկրորդը՝ կրկնակի թանկ: Ենթադրվում է միավորել Պուլկովո-1-ի եւ Պուլկովո-2-ի տարածքները: Արդյունքում դա կլինի Եվրոպայի խոշորագույն օդանավակայանը իր գործարար կենտրոնով, խանութներով ու հյուրանոցներով:

## Խադդամ. «Սիրիան խաղաղություն է ցանկանում»

«Սանա» գործակալությունն «Արմենպրեսի» համար հաղորդում է, որ ուժով պարտադրված խաղաղությունը իսկական խաղաղություն չէ: Իսկ զենքերի վրա հիմնված խաղաղությունը երկարատեւ չի լինում, հայտարարել է Սիրիայի փոխնախագահ Աբդել Հալիմ Խադդամը: Չորեքշաբթի օրը ելույթ ունենալով երկրում արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցության իշխանության գլուխ անցնելու 32-րդ տարեդարձի առթիվ կայացած հանդիսությունների ժամանակ, նա Իսրայելին մեղադրել է տարածաշրջանում խաղաղության գործընթացի ճանապարհին խոչընդոտներ ստեղծելու մեջ: Նրա կարծիքով, տարածաշրջանում խաղաղության հաստատման պայմանն է իսրայելական զորքերի լրիվ դուրսբերումը բոլոր բռնազավթված արաբական տարածքներից, այդ թվում նաեւ Լիբանանից մինչեւ 1967 թվականի հունիսի 4-ը գոյություն ունեցած սահմանները: Սիրիան, նշել է Խադդամը, միջազգային օրինականության վրա հիմնված խաղաղություն է ցանկանում: ԱՐՄԵՆՊՐԵՍ


ԱՐՄԻՆԴ ԿԵՆՏՐՈՆԸ

Հրավիրում է
ինգօրյա ճանապարհորդության դեպի Հնդկաստանի մայրաքաղաք:

ԵՐԵՎԱՆ - ԴԵԼԻ - ԵՐԵՎԱՆ

չվերթը կկայանա մարտի 11-ին

(ուղևորության ընթացքում ինքնաթիռը մնում է Դելիում)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է
ԵՐԵՎԱՆ - ՍԻՆԳԱՊՈՒՐ - ԵՐԵՎԱՆ
նոր չվերթ

«Էրեբունի» հյուրանոց, I մասնաշենք, 301-307 ս.

Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79





Եթե ցանկանում եք դառնալ աշխարհահռչակ «SALAMANDER» ֆիրմայի երջանիկ գնորդը, կարող եք հանդիպել «Հրազդան» մարզադպրոցի տնօրինությանը:



«ԱՅՍԲԵՐԳ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
բեռների ավիափոխադրում
ԵՐԵՎԱՆ - ՄՈՍԿՎԱ
(ԻԼ-76ՏԴ ինքնաթիռով, Չկալովսկի օդանավակայան)

Մատչելի գներ
Վճարումը՝ ցանկացած ձևով
Կանոնավոր չվերթեր
Բեռնման ժամանակը՝ 6 ժամ

Հնարավոր է հումքի, սարքավորումների, նավթամթերքների, արդյունաբերական ապրանքների պայմանագրային առաքում ԱՊՀ և արտասահմանյան երկրներից



ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ

Ցանկացած չափսի եւ մակնիշի կեկտրոդներ երեւանյան պահեստից: Հնարավոր է հատուկ կեկտրոդների առաքում ըստ պատվերի, ինչպես նաեւ սանտեխնիկայի հավաքածուներ Պրահայից

Հանրապետության հր., Միությունների տուն, 3-րդ հարկ, սեն. 32

☎ 520531, 560633, 565095



ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ

Հայերեն տառերով «Յատրան» գրամեքենա: Գինը՝ մատչելի: Զանգահարել 77.30.98, Համլիկին



Հայաստանի Հանրապետության ազգային փոխադրող

«Հայկական Ավիաուղիներ»

ավիաընկերությունը հայտնում է, որ ապրիլի 3-ից կգործի կանոնավոր չվերթ

Երեւան - Սոֆիա - Երեւան

չվերթը կկատարվի «Զվարթնոց» օդանավակայանից:

Չվերթները կայանալու են ամեն երկուշաբթի:

Տոմսերը կարելի է ձեռք բերել ավիաընկերության գլխավոր գործակալությունից:

Հասցեն՝ Մաշտոցի պող. 15



AJAX

ԱՅԱՔՍ

«ԱՅԱՔՍ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՎԻԱՏՈՄՍԵՐ ԱՄՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԵՐԿԻՐ:

ՀԱՍՑԵՆ. 375014, ԵՐԵՎԱՆ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ. 49
ՀԵՌ. (8852) 234700, 230719 ՖԱՔՍ (8852) 282951

ՏՈՄՍԵՐ՝ ԲՈԼՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ


«Հայաստան» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Հիմն. 1992 Տպաքանակ 7000 Ստորագրված է տպագրության 9. 03. 1995 Գինը 40 դրամ

digitised by A.R.A.R.@